



ԷՑ. ԴԱՏԱՎՈՐ

Հոարդներ մըջ դաշտին կը կովտին չիրարու հետ, կը տեսնան,
օր հըտ ուր ճամպուն ուրանց յաշ տղե մե գեկա չընցնա. կէրթան
զտղեն կը կանդըցուն, կըսին.

— Խնդիրք կէնինք քըղնե, ա՛րի դմըղի բարիշցու:

Տղեն կըսե.

— Զիմ աչքեր կապեք, օր չըտեսնամ կովըտողներու չերես,
մեկ ու մուրայի էնի՛մ, գեկամ, թե չէ՛ չըմ չիգա:

Զտղի աչքեր կը կապին, կը տանին զգատ ուրանց կը տեսնա.
հախ ու նահախ կէնե, կը բարիշցու, կը թողե կէրթա: Զեն կը ցրվի
մըջ էրկրին, թե տղե մե հմլա-հմլա հախ դատք կէնե:

Կէղնի օր էդ էրկրի դատավոր կը մեռնի:

— Ո՞ն էնինք դատավոր, ո՞ն չէնինք,— կըսին,— զէն հախ
դատ ու դատաստան էնող տղին էնինք:

Կէրթան զտղեն կը բերին, կըսին.

— Քըղնե ճշմարիտ մարդ չկա, օր էղնի դատավոր վըր մըզի,
ա՛րի էղի դատավոր:

Տղեն կըսե.

— Օր հմալ է՛ զիմ էրկու աչք լե հանեք, օր ես դատավորութեն
էնիմ, սաղ աչքերով կը տեսնամ մարդոց չերէս, մեկ ու մուրայի
կէնիմ, զգատ կը ծռիմ:

Ինչ կէնին, չէնին, շարա չէղնի հըտ տղին, դեխան զաչքեր կը
հանին, կէնին վըր էրկրին դատավոր: Յառջի բերան էրկու մարդ

գիկա դատարան: էրկու մարգ գուզին էրթան ուրանց էրկիր, խել մե մարդիկ կըսին:

— Կէրթաք, գացեք, հմա ձեր դատած մալ ու դուլվաթ չըպտի տանիք հըտ ձըզի, էդ մալ ու դուլվաթ մըջ մեր էրկրին իք դատի: Յոդա կը մնաք՝ ձեր մալն է, մարդ դագմիշ չը կոնա էդնի. հմա օր կէրթաք՝ ձեր մալ ու դուլվաթ թողեք մըջ էրկրին:

Դատավոր կը հարցու.

— էդ մարդիկ քանի՞ տարեկան են, օր մտան մեր էրկիր:

— Քսան-քսանուհինգ տարեկան կէդնեն:

— Քանի՞ տարի է օր չոդա կաշխատին:

— Քսան-եռսուն տարի կէդնի:

— Շա՛տ աղեկ, — կըսե դատավոր, — էդ մարդիկ զուրանց ումր փճացուցած՝ զէդ մալ ու դուլվաթ դատած ին. դառցուցե՛ք տվեք զուրանց չհելութեն ուրանց, ընդոք լե զուրանց մալ ու դուլվաթ թողին մըջ էրկրին:

Ժողովուրդ կը զարմանա, թե էդի ի՛մալ արդար դատավոր մե:

